ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ГОСУДАРСТВЕННАЯ СЛУЖБА
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУК
МИНИСТЕРСТВА СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНІ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

"03" 11 2017
5978-17

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» Հ/Կ-Ի,
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԱԹԵՎ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(ք. Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ. (3741) 563363, 580219)

Ի լրումն 2017 թվականի հոկտեմբերի 23-ի
թիվ 04/12.2/5636-17 գրության

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) պատրաստակամ է Ձեր կողմից մատնանշված՝ սառեցված թռչնամսի ոլորտում անհրաժեշտ հիմնավորումների առկայության պարագայում իրականացնել պետական վերահսկողություն:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացքին Ծառայության մասնակցությանը, ապա Ծառայությունը նման ուսումնասիրություն իրականացնելու գործառույթ չունի: Օրենսդրությամբ սահմանված են պետական վերահսկողության իրականացման գործիքները, որոնցով համատեղ ուսումնասիրության լիազորություն սահմանված չէ:

Ողջունելով սննդամթերքի անվտանգության ոլորտի խնդիրների վերաբերյալ լրատվամիջոցի հետաքրքրվածությունը և առաջնորդվելով սպառողին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու սկզբունքով՝ ներառյալ արդեն կատարված վերահսկողական միջոցառումներն ու արդյունքները, Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը կարող է ձեր կողմից նախանշված ապրանքատեսակները նմուշառել և փորձաքննության ուղարկել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների

Կոմիտասի պող. 49/2, 0051 Երևան, ՀՀ
Пр. Комитаса 49/2, Ереван 0051, РА

Тел./факс: (+374 10) 20 38 53
Эл. почта: hs@ssfs.am
Веб-сайт: www.ssfs.am

կենտրոն» ՊՈԱԿ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Հետք»-ի նախընտրած լաբորատորիան հրաժարվում է այս շրջանակում իրականացնել անվճար փորձաքննություն:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել պետական վերահսկողության իրականացման համար օրենսդրությամբ սահմանված հիմքերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՄԻՐԶՈՅԱՆ

Կատ.՝ Սննդամթերքի անվտանգության
և որակի հսկողության տեսչություն/Հ. Ամիրյան
Հեռ.՝(+374 10) 20 38 57 / 131